ՀԱՍԿԱՆԱԼ COBRA-Ն

(Բյուջեի հաշտեցման համընդգրկուն համակցված օրենք [Consolidated Omnibus Budget Reconciliation Act])

Աշխատանքում ձեր առողջական ապահովագրությունը կորցնելու դեպքում, կարող եք առողջական ապահովագրության համար ունենալ մի քանի տարբերակ: COBRA-ն մեկն է այդ տարբերակներից: COBRA-ն ձեզ թույլ է տալիս պահել աշխատանքում ձեր ունեցած նույն առողջական ապահովագրությունը հավելյալ ժամանակահատվածի համար:

COBRA-ն վերաբերում է 20 կամ ավելի աշխատող ունեցող մասնավոր գործատուների կամ նահանգային կամ դաշնային կառավարությունների:
COBRA-ն աշխատողներին և նրանց ընտանիքներին թույլ է տալիս որոշել շարունակել իրենց գործատուի հովանավորած առողջական ապահովագրությունը՝ «որակավորվող դեպքի» ենթարկվելուց հետո: Օրինակները կարող են ներառել՝ ծածկված աշխատողի աշխատանքի դադարեցումը կամ աշխատանքային ժամերի կրճատումը. ծածկված աշխատողի մահը. ծածկված աշխատողի Medicare-ի իրավասու դառնալը. ծածկված աշխատողից ամուսնալուծվելը կամ օրինականորեն բաժանվելը. կամ կախյալ երեխայի կախյալ լինելուց դադարելը ծրագրի ընդհանրապես կիրառելի պայմանների ներքո:

Առավելությունները՝

Ծածկույթ՝ դուք և ձեր ընտանիքը կարող եք ձեր մատակարարներին պահել 18-ից մինչև 36 ամիս

Ժամանակ՝ ձեր աշխատանքից հեռանալուց հետո ձեզ տրվում է մինչև 60 օր COBRA ծածկույթ ընտրելու համար, ինչը ձեզ ժամանակ է տալիս որոնելու նոր ծրագրեր և ընտրելու մեկը՝ քանի դեռ ապահովագրված եք

Դեղեր՝ դեղերի ծախսերն ու համավճարները կմնան նույնը

Ընտրություն՝ շատ նահանգներ ունեն մանր-COBRA-ի օրենքներ, որոնք թույլ են տալիս հավելյալ նպաստներ ձեր ծածկույթի հետ

Ինչպես գրանցվել COBRA ծածկույթի համար

- Գործատուն ձեզ COBRA-ի ընտրության ձև պետք է ուղարկի որակավորվող դեպքից հետո 45 օրվա ընթացքում
- Վերանայեք ընտրության ծանուցագիրը, որը կներառի ծրագրի տարբերակներն ու գները
- Ծրագրերն ու ծածկույթը պետք է ճիշտ նման լինեն այլ աշխատողների տրամադրվող ծածկույթին
- Եթե որոշեք անդամագրվել, լրացրեք ձևն ու վերադարձրեք 60 օրվա ընթացքում

COBRA-ի միջոցով նպաստները ժամանակավոր լուծում են: Գուցե ցանկանաք նկատի ունենալ մի երկարաժամկետ ապահովագրություն ուսումնասիրելը կամ ապահովագրական ծածկույթի համար համեմատություն և գնում կատարելը Մատչելի խնամքի օրենքի (Affordable Care Act) շուկայի միջոցով:

Թերություններ՝

Ծախս՝ պարտավոր եք վճարել ձեր բոլոր հին ապահովագները, ներառյալ՝ այն բաժինը, որը մի ժամանակ ծածկել էր ձեր գործատուն, գումարած՝ վարչական վճարները

Լրաժամկետ՝ COBRA ծրագրերը վերջ են գտնում մի որոշակի ժամանակից հետո և ուշադրություն պետք է դարձնեք լրաժամկետներին

Խստապահանջություն՝ COBRA-ի որևէ վճարում ուշացնելու դեպքում, ձեր ծածկույթը վերջ կգտնի

Որո՞նք են COBRA-ի վերջնաժամկետները, որոնք պետք է իմանամ

- COBRA ծածկույթ ընտրելու համար 60-օրյա ժամանակահատվածը: Այս 60 օրերը սկսում են ձեր որակավորվող դեպքի ամսաթվին կամ ձեր գործատուից ծանուցագիր ստանալու ամսաթվին, որը որ ավելի ուշ է:
- COBRA-ի ձեր առաջին ապահովագնի վճարումը կատարելու 45-օրյա ժամանակահատվածը և COBRA-ի յուրաքանչյուր հավելյալ ապահովագնի վճարումը կատարելու 30-օրյա ժամանակահատվածը.
- 60-օրյա ժամանակահատվածը, երբ աշխատողները պարտավոր են ծրագրին հաղորդել COBRA-ի որակավորվող դեպքի կամ հաշմանդամության վճռի մասին. և
- Ծրագրի վարիչը աշխատողին ծանուցագիր պետք է տա իր առողջական ապահովագրությունը COBRA-ի միջոցով պահելու կարողության մասին: Սովորաբար, նրանց 44 օր է տրվում որակավորվող դեպքից սկսած:

ՀԱՐՑԵ՞Ր

https://moqc.org/

moqc@moqc.org

MOQC
MICHIGAN ONCOLOGY QUALITY CONSORTIUM

Blue Cross Blue Shield of Michigan
Nonprofit corporations and independent licensees of the Blue Cross and Blue Shield Association